**Շիրակի պետական համալսարան**

**Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հարգելի գերազանցիկ-արևանման ուսանողներ,**

Եկել է ժամանակը կիսվելու Ձեր փայլուն մասնագիտական գիտելիքներով ու կարողություններով ձեզանից ավելի ցածր կուրսերում սովորողների հետ:

Այս հայտարարության սկիզբը կարդալուց հետո «ա՜, հավես չկա կամ ժամանակ չունեմ» ասողների համար՝

1. կիսվելով **Ձեր գիտելիքներով Ձեր մասնագիտությանը պատկանող ուսանողների** հետ, դրանք կդառնան ավելի ամուր,
2. այլ **ուսանողների հարցերին** պատասխանելիս դժվարություններ զգալու պարագայում կորոնեք դրանց պատասխանները, ինչն էլ կխանգեցնի Ձեր **մասնագիտական** ու, ինչո՛ւ ոչ, **ընդհանրական գիտելիքների խորացմանը**,
3. **ձեռք կբերեք նոր ընկերներ, ծանոթներ**,
4. կսովորեք ոչ թե **վատնել Ձեր ժամանակը սոցիալական ցանցերում**, այլ **արդյունավետ կառավարել**,
5. կամավորական վեցամսյա գործունեության միջոցով կկարողանաք հարստացնել Ձեր **CV-ն մեկ կարևոր տողով** և գործունեության արդյունքում կստանաք **նամակ-երաշխավորագիր,**
6. կդարձնեք Ձեր **ուսանողական կյանքն** առավել **բազմազան ու բազմաբովանդակ**:

Նոր ստեղծագործ նախաձեռնության ակտիվ անդամը դառնալու համար անմիջապես կա՛մ գտիր մեզ (**Թերեզա Խաչատրյանին կամ Շուշան Գասպարյանին**) Կենտրոնում, կա՛մ զանգահարիր (+374 93 248 119, +374 94 496 510), կա՛մ գրիր (Tereza_Khachatryan@shsu.am, shushan_gasparyan@shsu.am):